## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-25/128-Պ

ք. Երևան 24-ը մարտի, 2025թ.

**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը** (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

**«ՍԹԵՅՋ ՍԹԱՅԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը** (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Բագրատ Դիվանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),
ստորագրեցին պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1. Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով մատուցել «Գյումրին ընտրում է» խորագրով նախընտրական բանավեճի դեկորացիայի վերանորոգման ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել պատշաճ մատուցված Ծառայությունները և վճարել դրանց դիմաց Պայմանագրով նախատեսված կարգով, չափով և ժամկետում:

1.2. Պայմանագրի 1.1. կետով սահմանված Ծառայությունների նկարագիրը սահմանված է Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 2-ով:

1.3. Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ նյութերը ապահովվում է Կատարողը:

1.4. Կատարողը երաշխավորում է իր կողմից մատուցվելիք Ծառայությունների որակը և կրում է նմանատիպ Ծառայությունների արդյունքի սովորական օգտագործման համար պիտանիության ժամկետի ընթացքում (որը, տվյալ պարագայում, սկսվում է Պայմանագրով սահմանված Ծառայությունները Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից և սահմանվում է 1 տարի) որակի կորստի դիսկը:

1.5. Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու Պայմանագիրը և ունեն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

1.6. Ծառայությունները մատուցվում են Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2025 թվականի մարտի 28-ը ներառյալ:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*2.1.* ***Պատվիրատուն իրավունք ունի՝***

2.1.1. Կատարողից պահանջել Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցել պատշաճ որակով, ամբողջությամբ և Պայմանագրով սահմանված ժամկետում:

2.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը՝ պահանջելով տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը:

2.1.3. Պահանջել Կատարողից աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև մատուցված Ծառայությունների արդյունքն ընդունելիս:

2.1.4. Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Կատարողին տալ Ծառայությունների մատուցմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ:

2.1.5. Կատարողի կողմից Ծառայությունները թերություններով մատուցելու դեպքում, երբ Կատարողը Պատվիրատուի սահմանած ողջամիտ ժամկետում չի վերացնում մատուցված Ծառայությունների արդյունքում հայտնաբերված թերությունները՝

I. Պատվիրել այլ անձի վերացնել Կատարողի թույլ տված թերությունները և պահանջել Կատարողից հատուցել այդպիսի թերությունների վերացման համար իր կատարած ծախսերը,

II. Պայմանագրի 2.1.6 կետի ii ենթակետով սահմանված կարգով միակողմանի լուծել Պայմանագիրը:

2.1.6. Միակողմանիորեն լուծել Պայմանագիրը, չվճարել Կատարողին Ծառայությունների արժեքը և պահանջել վնասների հատուցում, եթե՝

I. Կատարողը ժամանակին չի սկսում Ծառայությունների մատուցումը կամ Ծառայությունները մատուցում է այնքան դանդաղ, որ դրանց ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

II. Ծառայությունների մատուցման ժամանակ ակնհայտ է դառնում, որ դրանք պատշաճ չեն մատուցվելու և առկա թերությունների վերացման համար Պատվիրատուի նշանակած ողջամիտ ժամկետում այդպիսի թերությունները Կատարողի կողմից չեն վերացվում,

III. Կատարողն այլ կերպ թույլ է տալիս Պայմանագրի էական խախտում:

2.1.7. Կատարողի մատուցած Ծառայությունների որակի վերաբերյալ պահանջ ներկայացնել Ծառայությունների հանձնման-ընդունման ակտի երկկողմանի ստորագրվելուց հետո 1 (մեկ) տարվա ընթացքում:

2.1.8. Պահանջել Կատարողից ամբողջությամբ հատուցել Ծառայությունները թերություններով մատուցման արդյունքում Պատվիրատուին պատճառված վնասը:

2.1.9. Միակողմանի լուծել Պայմանագիրը, այդ մասին 5 (հինգ) օր առաջ ծանուցելով Կատարողին: Տվյալ պարագայում Պատվիրատուն պարտավորվում է փոխհատուցել Կատարողին միայն փաստացի կատարած ծախսերի գումարը՝ Կատարողի կողմից համապատասխան ծախսերը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու պարագայում:

*2.2.* ***Պատվիրատուն պարտավոր է՝***

2.2.1. Ողջամտության սահմաններում Կատարողին ապահովել Պայմանագրի պատշաճ կատարման համար անհրաժեշտ պայմաններով, այդ թվում, բայց չսահմանափակվելով, Կատարողին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն, Պատվիրատուի տարածք մուտք գործելու հնարավորություն,

2.2.2. Պայմանագրի 2.4.4. կետով սահմանված հանգամանքների վերաբերյալ Կատարողի նախազգուշացումը ստանալուց 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին գրավոր հայտնել այդպիսի հանգամանքների կապակցությամբ իր դիրքորոշումը:

2.2.3. Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կատարողի մասնակցությամբ զննել և ընդունել մատուցված Ծառայությունների արդյունքը, իսկ Պայմանագրից Ծառայությունների արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Ծառայություններում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին Պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով հայտնել Կատարողին:

2.2.4. Վճարել Կատարողին պատշաճ մատուցված Ծառայությունների համար Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետում:

*2.3.* ***Կատարողն իրավունք ունի՝***

2.3.1. Պատվիրատուից պահանջել ապահովել իրեն Պայմանագրի 2.2.1 կետով սահմանված պայմաններով,

2.3.2. Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց ու պահանջել հատուցելու դրա դադարման հետևանքով իրեն պատճառված վնասները, եթե Պատվիրատուն, չնայած Պայմանագրի 2.4.4 կետում նշված հանգամանքների մասին Կատարողի կողմից ժամանակին հիմնավոր նախազգուշացմանը,

ողջամիտ ժամկետում անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել այն հանգամանքները վերացնելու համար, որոնք սպառնում են մատուցվող Ծառայությունների պիտանիությանը,

2.3.3. Այն դեպքում, երբ Ծառայությունների մատուցելն անհնար է դարձել Պատվիրատուի գործողությունների կամ վրիպումների հետևանքով՝ մատուցված Ծառայությունների հաշվառմամբ ստանալ Պայմանագրի գնի համապատասխան մասը:

2.3.4. Պատվիրատուից պահանջել ընդունել պատշաճ մատուցված Ծառայությունները:

2.3.5. Պատվիրատուից պահանջել մատուցված Ծառայությունների դիմաց վճարել Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում, իսկ կետանցի դեպքում վճարել նաև՝ Պայմանագրի 5.5. կետով սահմանված տույժը:

*2.4.* ***Կատարողը պարտավոր է՝***

2.4.1. Ծառայությունները մատուցել անձամբ, ամբողջությամբ, Պայմանագրով նախատեսված ժամկետում և պատշաճ որակով:

2.4.2. Կատարել Ծառայությունների մատուցման կապակցությամբ Պատվիրատուի տված ողջամիտ ցուցումները, եթե դրանք չեն հակասում Պայմանագրին, կիրառելի օրենսդրության պահանջներին:

2.4.3. Եթե առաջացել է լրացուցիչ Ծառայություններ մատուցելու անհրաժեշտություն, որի պատճառով էապես ավելացել է մատուցման ենթակա Ծառայությունների գինը՝ այդ մասին ժամանակին զգուշացնել Պատվիրատուին: Այն դեպքում, եթե Կատարողը Պատվիրատուին ժամանակին չի նախազգուշացնում մատուցման ենթակա Ծառայությունների կամ Պայմանագրի գինն ավելացնելու անհրաժեշտության մասին, պարտավոր է կատարել Պայմանագիրը՝ պահպանելով Պայմանագրով որոշված գնով վարձատրություն ստանալու իրավունքը:

2.4.4. Պատվիրատուին անհապաղ նախազգուշացնել և մինչև նրանից ցուցում ստանալը դադարեցնել Ծառայությունների մատուցումը, եթե հայտնաբերվել են՝

i. Ծառայությունների մատուցման եղանակների մասին Պատվիրատուի ցուցումների իրագործման հետ կապված՝ նրա համար հնարավոր անբարենպաստ հետևանքներ.

ii. Կատարողից անկախ այլ հանգամանքներ, որոնք սպառնում են մատուցվող Ծառայությունների արդյունքի պիտանիությանը կամ անհնար են դարձնում դրանք ժամանակին ավարտելը: Կատարողը, որը Պատվիրատուին չի նախազգուշացրել կետում նշված հանգամանքների մասին կամ շարունակել է Ծառայությունների մատուցումը՝ չսպասելով նախազգուշացման պատասխանի համար Պայմանագրի 2.2.2. կետով սահմանված ժամկետի ավարտին կամ, չնայած Ծառայությունների մատուցումը դադարեցնելու մասին Պատվիրատուի ժամանակին տված ցուցումին, շարունակել է դրանք, իրավունք չունի իրեն կամ իր կողմից Պատվիրատուին համապատասխան պահանջներ ներկայացնելիս վկայակոչել նշված հանգամանքները:

2.4.5. Պատասխանատվություն կրել Ծառայությունների մատուցման վերջնական ժամկետի խախտման համար՝ վճարելով Պայմանագրի 5.2. կետով նախատեսված տույժը և հատուցելով կետանցով Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.6. Պայմանագրի 2.1.6. կետով նախատեսված հիմքերով Պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել Պայմանագրով նախատեսված տուժանքը:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրով նախատեսված Ծառայությունների արժեքը կազմում է 3 402 666 (երեք միլիոն չորս հարյուր երկու հազար վեց հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամ՝ ներառյալ բոլոր կիրառելի հարկերը, համաձայն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված նախահաշվի: Սույն կետով սահմանված Պայմանագրի գինը ներառում է Ծառայությունների մատուցման համար Կատարողի կողմից իրականացվելիք բոլոր ծախսերը:

3.2. Պատվիրատուն փաստացի մատուցված Ծառայությունների դիմաց վճարումն իրականացնում է հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Պայմանագրով վճարումներն իրականացվում են անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.4. Վճարման ամսաթիվ է համարվում Պատվիրատուի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման օրը: Ընդ որում, բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կատարում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը:

## 4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

4.1. Ծառայությունների մատուցման ավարտից հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը:

4.2. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից հետո 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կատարողի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների որակը, ծավալը:

4.3. Հանձնման-ընդունման ակտը Պայմանագրի 4.2. կետում նշված ժամկետում ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունները համապատասխանում են Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման ակտը չի ստորագրվում և.

i. Կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով հայտնաբերված թերությունների վերացման համար անհրաժեշտ և Կատարողի կողմից անհատույց մատուցման ենթակա Ծառայությունները և դրանց մատուցման ողջամիտ ժամկետները;

ii. Պատվիրատուն ընդունում է պատշաճ մատուցված Ծառայությունները, և վճարում միայն տվյալ Ծառայությունների դիմաց, ինչպես նաև կիրառում Պայմանագրով սահմանված պատասխանատվության միջոցները;

iii. Պատվիրատուն Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցները:

4.4. Եթե Պայմանագրի 4.2. կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունների արդյունքը կամ չի մերժում դրանց ընդունումը, ապա մատուցված Ծառայությունները համարվում են ընդունված և Պայմանագրի 4.2. կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող առաջին աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում մատուցված Ծառայությունների որակի և դրանց մատուցման վերջնական ժամկետի պահպանման համար:

5.2. Ծառայությունների մատուցման վերջնական ժամկետը խախտելու դեպքում Կատարողից կետանցի յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի ընդհանուր առավելագույն արժեքի 0,13 (զրո ամբողջ տասներեք հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.3. Մատուցված Ծառայությունների արդյունքը Պայմանագրի 4.3. կետով նախատեսված հիմքով չընդունվելու, ինչպես նաև 2.1.6. կետով նախատեսված կարգով Պայմանագիրը լուծվելու դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր արժեքի 10 (տասը) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարվող գումարներից:

5.5. Մատուցված Ծառայությունների համար վճարելու Պայմանագրով սահմանված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից կետանցի յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ վճարման

ենթակա, սակայն չվճարված գումարի 0,13 (զրո ամբողջ տասներեք հարյուրերորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան վճարման ենթակա գումարի 5 (հինգ) տոկոսը:

5.6. Տուժանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

5.7. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 6. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

6.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը ստորագրելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

6.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

## 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի համար դրանով նախատեսված պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը:

7.2. Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում է, որ ունի բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու Պայմանագիրը և ներկայացնելու Պատվիրատուին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում: Սույնով Կատարողը հավաստում է, որ հանդիսանում է գործունակ քաղաքացի և գիտակցում ու ընդունում է իր կողմից ստորագրված Պայմանագրով ծագող պարտավորությունների բնույթը, էությունը:

7.3. Կողմերից որևէ մեկն իրավունք չունի Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

7.4. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

7.5. Պայմանագրի բոլոր Հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

7.6. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով, ինչպես նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

7.7. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

7.8. Պայմանագրի կատարման ընթացքում Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, համապատասխան Կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ նախկինում տրամադրված վավերապայմաններով արված վճարումները, ուղարկված ծանուցումները համապատասխանաբար կհամարվեն ժամանակին կատարված կամ պատշաճ հասցեով ուղարկված:

7.9. Պայմանագիրը, ինչպես նաև դրան կից բոլոր հավելվածները, լրացումները, համաձայնագրերը և հանձնման-ընդունման ակտերը կարող են ստորագրվել Կողմերի կողմից անձամբ, կամ էլեկտրոնային ստորագրություն դնելու միջոցով, կամ էլեկտրոնային փոստով պայմանագրի և/կամ

հարակից փաստաթղթերի անձամբ ստորագրված օրինակների սկանավորված կամ լուսանկարված պատճենների փոխանակման միջոցով: Կողմերն ընդունում են, որ սույն կետով սահմանված բոլոր եղանակները համարվում են համարժեք և հավասարեցվում են բնօրինակներին: Էլեկտրոնային փոստով հաղորդագրությունը կողմերի միջև իրականացվում է Պայմանագրի վավերապայմաններում նշված էլ. փոստի հասցեների միջոցով:

7.10. Կողմերն արձանագրում են, որ Պայմանագրի վավերապայմաններում նշված Կողմերի էլեկտրոնային հասցեներին կամ փոստային կապի միջոցով Պայմանագրի վավերապայմաններում նշված հասցե(ներ)ին ուղարկված նամակագրությունը Կողմերն ընդունում են որպես պաշտոնական և վավեր: Եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ, Կողմերի կողմից սույն կետով նախատեսված էլեկտրոնային հասցեների միջոցով միմյանց ներկայացրած ծանուցումները, նամակները, դիմումները, կարծիքները և հաստատումները հավասարազոր են նրա կողմից թղթային կրիչի վրա ստորագրությամբ ներկայացված նամակներին, դիմումներին, կարծիքներին և հաստատումներին:

7.11. Պայմանագրի առարկային վերաբերող և Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7.12. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.13. Պայմանագիրը կազմված է հայերեն, երկու հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

## ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **Պատվիրատու** | **Կատարող** |
|---|---|
| **«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ** | **«Սթեյջ Սթայլ» ՍՊԸ** |
| Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 | Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 44/4 |
| ՀՎՀՀ՝ 01540062 | ՀՎՀՀ՝ 02257568 |
| «Ինեկոբանկ» ՓԲԸ | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ՝ 2050022082671001 | Հ/Հ՝ 2050622047351001 |
| Էլ. փոստի հասցե՝ vahan.mamikonyan@1tv.am, ceooffice@1tv.am | Էլ. փոստի հասցե՝ divanyan.b@gmail.com |
| **Հ. Մովսիսյան** | **Բ. Դիվանյան** |
| *Գործադիր տնօրեն* | *Տնօրեն* |

*Հավելված N 1*
*2025թ.-ի մարտի 24-ին ստորագրված*
*N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-25/128-Պ պայմանագրի*

| ՆԱԽԱՀԱՇԻՎ | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանումը | Չափման միավորը | Քանակը | Անհրաժեշտ նյութերի անվանումը | 1 միավորի նյութի քանակը | Նյութերի ընդհանուր քանակը | 1 միավորի նյութի արժեքը (դրամ) | Նյութերի ընդհանուր արժեքը (դրամ) | Աշխատանքի արժեք | Ընդամենը աշխատանքի արժեք |
| 1 | Կախովի դեկոր 5000X3500X500 մմ չափի | հատ | 1 | Օրգանական ապակի, հատ | 6 | 6 | 24,000 | 144,000 | 1,000,000 | 1,000,000 |
| | | | | մետաղական խողովակ, գ. մետր | 36 | 36 | 700 | 25,200 | | |
| | | | | Տրանսֆորմատոր, հատ | 3 | 3 | 13,500 | 40,500 | | |
| | | | | Լուսադիոդային ժապավեն, գ. մետր | 60 | 60 | 1,000 | 60,000 | | |
| | | | | ՊՎԽ, հատ | 8 | 8 | 12,000 | 96,000 | | |
| | | | | Ներկանյութ-լուծիչ | 1 | 1 | 100,000 | 100,000 | | |
| | | | | Մոնտաժային նյութեր | 1 | 1 | 50,000 | 50,000 | | |
| | | | | | | | | **515,700** | | |
| 2 | Թվով 11 ամբիոնների վերանորոգում | հատ | 1 | Թվով 11 ամբիոնների վերանորոգում | 1 | 1 | 500,000 | 500,000 | | |
| | | | | | | | | **500,000** | | |
| 3 | Ապամոնտաժում և տեղափոխություն Երևան | հատ | 1 | Ապամոնտաժում և տեղափոխություն Երևան | 1 | 1 | 350,000 | 350,000 | | |
| | | | | | | | | **350,000** | | |
| | **Ընդամենը** | | | | | | | **1,365,700** | | **1,000,000** |
| | **Ընդամենը նյութերի, պատրաստման, մոնտաժման արժեքը** | | | | | | | **2,365,700** | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Տրանսպորտային ծախսեր | | | | | | | 100,000 | | |
| | **Ընդամենը գումար** | | | | | | | **2,465,700** | | |
| | Շահույթ | | | | | | | 369,855 | | |
| | **Ընդամենը դեկորացիայի նախագծման և պատրաստման արժեքը** | | | | | | | **2,835,555** | | |
| | Հարկային պարտավորություններ 20% | | | | | | | 567,111 | | |
| | **Ընդհամենը ըստ նախահաշվի** | | | | | | | **3,402,666** | | |

**Պատվիրատու**
**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ**
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001
Էլ. փոստի հասցե՝ vahan.mamikonyan@1tv.am, ceooffice@1tv.am

**Հ. Մովսիսյան**
*Գործադիր տնօրեն*

**Կատարող**
**«Սթեյջ Սթայլ» ՍՊԸ**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 44/4
ՀՎՀՀ՝ 02257568
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050622047351001
Էլ. փոստի հասցե՝ divanyan.b@gmail.com

**Բ. Դիվանյան**
*Տնօրեն*

*Հավելված N 2*
*2025թ.-ի մարտի 24-ին ստորագրված*
*N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-25/128-Պ պայմանագրի*

| Հ/Հ | Անվանումը | Տեխնիկական բնութագիր | Արժեքը/ ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | **<<Գյումրին ընտրում է>> դեկորացիա** | Հատակի ծածկի տեղադրում շուրջ 150 քառակուսի մետր 18 մմ հաստությամբ լամիանտե ԴՍՊ-ով:<br><br>Թվով 11 հատ ամբիոնների վերանորոգում(ներառյալ վնասված օրգանական ապակիների, ՊՎԽ-ների և լեդ լուսավորության փոխարինում):<br><br>Առաստաղից կոխվող դեկորացիայի վերանորոգում (ներառյալ վնասված օրգանական ապակիների, վնասված ՊՎԽ-ների փոխարինում և ներկում) և տեղադրում:<br><br>Դեկորացիայի տեղափոխությունը Գյումրի քաղաք, տեղադրումը, ապամոնտաժումը և տեղափոխությունը Երևան քաղաքի Գ. Հովսեփյան 26 հասեով իրականացվում է մատակարարի կողմից: | **3,402,666** |
| | **Ընդամենը** | | **3,402,666** |

**Պատվիրատու**
**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ**
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001
Էլ. փոստի հասցե՝ vahan.mamikonyan@1tv.am, ceooffice@1tv.am

**Հ. Մովսիսյան**
*Գործադիր տնօրեն*

**Կատարող**
**«Սթեյջ Սթայլ» ՍՊԸ**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 44/4
ՀՎՀՀ՝ 02257568
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050622047351001
Էլ. փոստի հասցե՝ divanyan.b@gmail.com

**Բ. Դիվանյան**
*Տնօրեն*